— Բարի եղէք, մայրիկ Ջան, եթէ կարելի է, կեղտոտ ջուրերը եւ տան աղբը բակը չթափել, առանց նրան էլ շնչել անկարելի է եւ առողջապահութեան համար...

Մայրիկ Ջանը նախ մոթմոթում է, ջղային մատներով փեշը վեր առնում քիթը մաքրում, ներս մտնում, դուրս գալիս, մօտի երեխին խփում, վրան անարդար տեղը պոռում, յետոյ սպասում է, որ հեռանաս եւ, երբ հեռացար, ձայնը գլուխն է գցում եւ սկսում...

Հարեւանները դուրս են գալիս, նայում: Զեղոքի դիրք են բռնում: Ուրախ են, որ այս անգամ թամաշայի պատճառը իրենք չեն: Պառաւը ոգեւորւում է: Միշտ փեշը ձեռքին, միշտ քիթը մաքրելով, կանգնում է այլեւս բակի մէջ կուտակուած ցեխի վրայ՝ միակ չոր տեղը՝ եւ պոռում: Որովհետեւ վարի յարկն են ապրում, կարծում են, որ միշտ էլ էտպէս ես ապրած: Տունից տեղից հանեցին, բաղերը չորցան, քաղաքի փողոցները գցեցին ,հիմա էլ եկել մաքրութիւն են սորվեցնում :Աշխատաւոր ժողովուրդը մե՛նք ենք, մեր իրաւունքն ենք պահանջում... Օտար երկրներից ոսկիներով չենք եկած...գլիններիս ցիլինտր չենք դնում, վզներիս գոմէշի կաշի չենք կապում...

Պառաւի կուացած քիթը սպառնալիքի նման օդի մէջ շարժւում է, խոպոտ ձայնը լեցնում է բակը հայհոյանքներով, ամօթալի խօսքերով, չորցած դաստակները բարձրանում են դէպի երկինք ու փեշը, պատուած առագաստի նման, ուռչում է, գլորւում, վայր ընկնում ու պոռոյտ գալիս վհուկի հետ միասին:

Այդպէս մի ժամ:

Այլեւս յոգնած, ամէն մարդ ներս է մտնում:

Տեղ չկայ՝ ուր նստես: Ցեխ, դարշահոտութիւն, անորոշութիւն եւ ահռելի ճանճրոյթ...

* * *

Այս տան բնակիչների աչքերի մէջ երկար նայուածքներ եմ ձգում, աշխատում հասկանալ: Բանալին կորցրած, ժանգոտած կղպանքների են նմանում, որոնք ընդմիշտ գոց են մընացել: Բանալու համար պէտք է դուռը ճեղքել, խոնաւութիւն տեսած փայտերը դատել եւ ներս մտնել մութ մի տեղ, ուր անպէտք տնային առարկաներ են լքուած:

Ապրում են ժամանակաւոր կերպով, պատահական, անտէր պանդոկի մէջ: Հինի կըցկըտուր յիշատակներ, որոնք հեռանալով, երբեմի թեւեր են առնում: Այս մարդիկ, կասկած չկայ, առաջ էլ ապրում էին միջակ, տաղտկալի կեանքով, բայց այսօր մշուշը այնքան թանձր է, օրը այնքան երերուն, որ անցեալի ամէն մի աննշան դէպք՝ մի մաքուր սենեակ, մի մահճակալ, մի դաշնամուր, մի վատթար պաշտօն, բանկայում ունեցած մի քանի հարիւր բուբլի՝ երեւակայութեան մէջ կորցրած մեծ գանձի հանգամանք են առնում:

Ներկայի դէմ չարանում են, վախենում: Վստահ չեն: Ապասում են: Ի՞նչ են սպասում, իրենք էլ լաւ չգիտեն: Ի՞նչ էլ լինի, միայն թող փոխուի, թող փոխուի...

Մէկ մէկի նախանձում են: Ամէն մէկը դիմացինի դէմ իր փոքրիկ իժը ունի պահած: Ծոցի մէջ, մարմնի տաքութեան մօտ, պահում են, էերակրում, փայփայում: Օրը մի քանի անգամ իժը գլուխը դուրս է հանում, լեղուն ցոյց տալիս, մի քանի կաթիլ թոյն թափում ու նորից ներս մտնում: Ժանգոտած կըղպանքը փակւում է: Մարդը մեքենաբար ապրում է իր օրը, եւ լուռ ներս մտնում խուցը՝ կեղտոտութեան, աղբի, թշուառութեան եւ ճանճրոյթի գիրկը ընկնում:

Տաղտկալի կեանք: Մինակութիւն, տրտմութիւն:

Վարի, պառաւ կնոջ զաւակը, ինչ որ առեւտուրով է զբաղուած: Առաւօտ կանուխ գընում է շուկայ, ուր քաղաքի չորս կողմից հաւաքւում են անորոշ գործի մարդիկ, աւելի շուտ անգործ մարդիկ: Նրանք որ ապրուստի ոչ մի միջոց չունին, փող չունին եւ տուն կերակուր պիտի բերեն: Մէկը Զանգուից ծածուկ երկու ձուկ է որսում եւ բերում, միւսը՝ չգիտես որտեղից տարօրինակ խոտեր է ժողովում, մի ուրիշը տուներից կոտրուած աթոռ, մաշուած հայելի, դամեր, կղպանք...

Սպասում են գիւղացիներին:

Կարագի եւ մածունի շուրջը անօթի գայլի նման պտտում են, հոտոտում, հեռուից, զգուշօրէն ակնարկութիւններ նետում, առաջարկութիւններ անում: Վանեցի սպեկիւլանտների ականջին բաներ են փսփսում, դէս դէն են վազում, պոռում կանչում են եւ չգիտես ինչ-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան